



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material



Ltin  
712



19 99.



**ԹՈՒՂԹ**

**ՔԱՀԱՆԱՅԻՑ**

**ՍՐԵԻԵԼԵԱՆ**

**ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ**

**ԱԶԳԻՆ**



№ 254

Ի ՊԱՏՄԱՆՆԻ ԹՂԹՈՅՆ

ՄՕՆՍԻՆԵՕՐ ԲԼՈՒԻՄԻ


Ի 6/18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1870





29 712

9 712-60



## ԳԵՐԱՊԱՅԵԱՌ ՏԵՐ .

Ստորագրեալ քահանայքս յաշխարհական և ի կրօնաւորական կարգէ՝ պարտուպառչած յարգութեամբ Ձեր Արհ. և Գեր. Տերութեանը կը յայտնենք :

Մեզմէ շատերը ամուսնս 6/18 թուականաւ Ձեզմէ մէկ շրջաբերական ազդարարութիւն մը ընդունած են, անուղղակի և ստորագրող անձին պատուոյն անպատշաճ կերպերով :

Նոյն թղթոյն ոճէն և յետագայ հրատարակութիւններէն կ'իմացուի, որ նոյն ազդարարութիւնը ուղղեալ է Հայ կաթողիկէ Արևելեան հասարակութեան հողւորական ծուայութիւնները ընող կղերին՝ իւրաքանչիւր անձանց :

Ազդարարութիւնը զմեզ կ'ամբաստանէ իբր պատճառ ջատկէ յողմանց, և արդէն սիգնատորեալ Բաժանման պսխնքն հերձուածոյ :

Մեզի կ'առաջարկէ ստորագրութեան համար ձև մը՝ Դասանալիան հասարոյ անուամբ :

Մեզի որոշ զրոսան որոշեալ պայմանաժամ մը կը սահմանէ, Հոկտեմբեր 6/18 թուականէն սկսեալ :

Մեզի կը սպառնայ պապական հրամանի մը կատարում մը, զմեզ Բոսն հերձուածոյ, և այս պարճաբար կաթողիկէ եկեղեցիէն զստորագրութեամբ հրատարակելու :

Գիտնալով որ նամակին և անոր խաւրուելուն կերպին պատասխանատուութիւնը՝ սոսկապէս և առանձինն ստորագրողին վրան կ'լինայ, այս մասին մէջ ամենեւին միջամտութիւն չընենիս կը յայտնենք:

Ամբաստանութեանց նկատմամբ՝ հարկ կը սեպենք հըրատարակել անոնց ստութիւնը, մեր անմեղութեան պաշտպանութեանը համար:

Առաջարկեալ ձևին վրայօք՝ չենք կրնար մեր արդարացի խորհրդածութիւնները չընել:

Սպառնալեաց նկատմամբ՝ հարստահարութեանց և կըրից նշաւակ եղած անմեղ սրտի մը հանդարտութիւնը կը ներկայացընենք:

Երբեք յիրաւի ցաւէ են, Գեր. Տէր, բայց անոնց պատճառը մենք չենք:

Որեւիցէ կըքէ ազատ միտք մը յայտնապէս կը տեսնայ, և նոյն խի Զեր առջի անգամ Պօլիս եկած ատենուան տեսութիւնները վկայ կը կանչենք, թէ այդ ցաւէ յաւանց պատճառը՝ մանաւանդ թէ յաւանց ցաւէ բնական պատճառը այն անձն է,

Որ քսանը հինգ տարիէ ի վեր խաղաղութեան և սիրոյ բարութեանց ճաշակը՝ ամենեւին չտուաւ իր ժողովրդեանը:

Որ իրեն յայտնի դործերովը ժողովրդեան սէրը պաղեցուց, և զգայուն ոգիքը դայթակղեցուց:

Որ կողմնակցութեան ոգւով դժտութիւններ ցանեց և կղերը հալածեց:

Որ Գեր. Գասպարեան Տեղապահին խաղաղ կառավարութեան ատեն հասարակաց հանդարտութիւնը խռովեց:

Որ կռուասէր և անխոհեմ ներկայացուցիչ մը խաւրելով՝ ցաւոյ սկզբնաւորութիւն մը տուաւ:

Որ նոյն անձին անխոհեմութիւնները գրգռելով՝ ցաւէ յաւանցները վերջին ծայրը հասուց:

Որ ուրիշ անձանց ալ պաշտպանութեամբն և գործակցութեամբն ուղեց և կ'ուզէ դեռ ցաւէ յաւանցները նոր ցաւերով պսակել:

ժողովուրդը այդպիսի տմարդի հօր մը ընթացքէն զը-  
պուած՝ բարձրագոյն իշխանութեանց աղաչեց, բայց լսելի չե-  
ղաւ . շնորհք խնդրեց, և իր ձայնը ընդունելի չեղաւ . բո-  
ղոքեց, բայց այդ կանոնական գործոյն ականջ կախող չե-  
ղաւ . գրեց և պատասխան իսկ չընդունեցաւ :

Չկրնալով ալ դիմանալ և իրեն վշտերէն խալըսելու  
համար՝ իր հպատակութիւնը զլացաւ, և անկէց բոլորովին  
բաժնուեցաւ : Տերութեան բռնած ճամբան ալ ժողովրդ-  
դեան որոշումը հաստատեց :

Մենք, հոգւոյ խնամատարութեան զդաժմունքներէ  
շարժեալ, մեր Մարտի 12ի Յայտարարութեան բացատրու-  
թեանցը համեմատ, այդչափ աստուածասէր ժողովրդեան  
հոգեւորական հոգը յանձերնիս առինք :

Թող դատէ ուրեմն ով որ կ'ուզէ, թէ մե՛նք ենք ար-  
դեօք այդ ցուսիչ յոգնոց պատճառը :

Կ'ամբաստանէք զմեզ դարձեալ, իբր պատճառ «բոլոր  
սիգնասորեալ բաժանման կամ հերձուածոց :

Վերջին դիպուածները, Գեր . Տէր, նաև ըստ Ձեր են-  
թադրութեան, Գեր . Գասպարեանին կանչուելէն և Գեր .  
Առաքելեանին գալէն կը սկսին :

Ժողովրդեան գործը և եկեղեցականաց համաձայնիլը  
Յունուար 25ի Յայտարարութեան վրայ կը հիմնին, և ա-  
նոր վրայ կը յաժին :

Այդ յայտարարութիւնը որ երեք մասերէ կը բաղկանայ .  
Ա. Ռուղափառ հաւատոյ դաւանութիւնը . Բ. Արեւելեան  
բարեկարգութեան և իրաւանց պահպանութիւնը . Գ. Գեր .  
Հասունեանի մերժումը, մեզմէ և ամենէն ալ իբր ուղղափառ  
դատուեցաւ :

Նոյն իսկ Ձեր Տերութիւնը այն ատեն մեղի հետ հա-  
մամիա գտնուեցաւ, նոյն յայտարարութիւնը իբր ուղղափառ  
ճանչնալու և ընդունելու :

Հռովմայ Բրոքականտան ալ չկրցաւ դեռ իբր ուղղա-  
փառութեան հակառակ ցուցնել նոյն յայտարարութիւ-  
նը, թէպէտև շատ մանր քննեց և աշխատեցաւ :

Անկախ կամ ալ ոչ եկեղեցոյ անունը՝ որ մտացածին հնարք  
մը եղաւ ոմանց իրենք զիրենք Պահպանող (փոփոխութեօր) ա-

նուստողայ , և սոյն իսկ Սրբազան Պապին նամակներուն մէջ  
ալ առանց մէկ հաստատութեան դրուեցաւ , այդ բացա-  
տրութիւնը մեր պաշտօնական յայտարարութեանց մէջ ոչ  
գտնուեցաւ և ոչ կը գտնուի . մանաւանդ թէ պաշտօնական  
կերպիւ կրկին և կրկին հակառակ ալ բողոքներ եղան :

Ժողովուրդեան և կղերին գրութեանցը՝ գործոցը՝ և  
խօսից հիմը այն օրէն ՚ի վեր ամենևին չփոխուեցաւ :

Այն որ այն ատեն ուղղափառութեան հակառակ չէր ,  
հիմայ ալ ուղղափառութեան հակառակ չկրնար ըլլալ :

Սրդ Ձեր Գեր . Տերութիւնը կը պնդէ թէ դիպուածները  
արդէն սկզբնաւորեալ բաժանում կամ հերձուած մըն են :

Կամ Գուք Ձեր միտքը փոխած էք , Գեր . Տէր , կամ թէ  
զմեզ մեր միտքը փոխած կը սեպէք :

Եթէ Գուք , Գեր . Տէր , մտքերնիդ և զգացումնիդ փո-  
խած էք , մենք ալ անոր համար մեր միտքը փոխելու չենք  
պարտաւորուիր :

Իսկ եթէ կը կարծէք թէ մենք միտունիս փոխած  
ենք , այդ վճիռը տալ Ձեզի անհնար էր , առանց զմեզ  
առաջուց հարցաքննելու , կամ թէ մեզմէ նոր յայտարա-  
րութիւն մը ընդունելու . ապա թէ ոչ Ձեր վճիռը անհիմն  
և ոչինչ կ'ըլլայ :

Մեզի ամենևին հարցաքննութիւն չեղաւ , և նոյն իսկ  
Ձեր խղճմտանքը կը վկայէ թէ կանոնական իրաւանց այդ-  
պիսի էական հրամանի մը՝ միշտ պակասաւոր գտնուեցաք :

Եւ ոչ նոր յայտարարութիւն մը հրատարակեցինք ,  
և այս ալ ստուգութիւն մըն է՝ որ ինչուան երէկ և այ-  
սօր նոյն Յունուար 23ի Յայտարարութեան հիմը կը  
կրկնէինք և կը կրկնենք , մենք և Ժողովուրդը :

Յունուար 23ի Յայտարարութեան երեք կէտերէն սրն  
է ուրեմն , որ հիմայ իբր ուղղափառութեան հակառակ ձե-  
ւացուիլ կ'ուզուի :

Սրդեօք կաթողիկէ Հռովմէական ճշմարիտ հաւատոյ  
գաւանդութիւնը , կամ թէ մի՞ սուրբ՝ կաթողիկէ՝ առաքե-  
լական եկեղեցւոյ հետ միութիւնը , կամ թէ Հռովմայ Սրբ-  
բազան Քահանայապետին յայտնեալ որդիական հպատակու-  
թիւնը և յարո՞ւմը :

Ոչ ոք, և ոչ ալ ուրեմն Ձեր Գեր. Տերութիւնը, կրնայ այդ բանը հաստատել. վասն զի յիրաւի այդ բանը ըսողը ինքը կաթողիկէ միութենէն կը բաժնուի:

Ձեր Տերութիւնը զվեզ կ'անբաստանէ՝ թէ արդեամբ Սրբազան Քահանայապետին անհնազանդ գտնուեցաք, Գեր. Հասունեանին հնազանդութիւննիդ զլանալով և կարծեցեալ կախակայութեան վճիռը անարգելով:

Գործ մը՝ որ իշխանութիւն ունեցող անձին կամ անոր հրամանին կը հակառակի, քանի որ անձը կամ հրամանը անիրաւ է, մանաւանդ դժպատեհ առիթներու մէջ, և քանի որ իշխանութիւն ունեցող անձէն գերագոյն օրէնք մը նեցուկ կը գտնէ, այն գործը անհնազանդութիւն չըսուիր:

Բայց ենթադրելովալ՝ թէպէտ չենք ընդունիր՝ թէ անհը, նազանդութեան գործ մը ըլլայ, քանի որ սոսկ նիւթական անհնազանդութեան գործեր են և ոչ թէ տեսական անհը, նազանդութիւն, միշտ անհնազանդութիւն կը մնան, և հերձուածոյ մը սկզբնաւորութիւն չեն ըլլար և ոչ ալ ուղղափառութեան հակառակ կերպարանք կրնան ունենալ:

Արդեօք արեւելեան իրաւանց և բարեկարգութեան պահպանութիւնն կրնա՞յ իրր ուղղափառութեան հակառակ ձև մը առնուլ:

Ամենքը կ'ընդունին, և Ձեր իսկ Գեր. Տերութիւնը ուրացած չէ, թէ բարեկարգութիւնը և իրաւունքը հաւատոյ և բարուց սահմանին մէջ չեն մոնար, որոնց վրայ հաստատուած է ուղղափառութեան կնիքը:

Բարեկարգութիւնը և իրաւունքը իւրաքանչիւր եկեղեցեաց սեփհական են, և ամենքը չէ թէ իրաւունք՝ հապապարտք ալ ունին զանոնք անխախտ պահպանելու:

Գործ մը մէկուն համար ուղղափառութեան համեմատ՝ և ուրիշին համար ուղղափառութեան հակառակ՝ չը կրնար ըլլալ:

Իրաւանց և բարեկարգութեան պահպանութիւնը՝ Հայոց համար ուղղափառութեան հակառակ, իսկ Քաղէացոց՝ Մերքիտաց՝ Մարոնեաց և Սսորուց համար՝ իրենց պատրիարկաց և եպիսկոպոսաց հետ մէկտեղ, ուղղափառութեան համեմատ՝ չկրնար ըլլալ:

Արդեօք Գեր. Հասունեանին մերժումը իբր ուղղափառութեան հակառակ կրնայ սեպուիլ :

Կաթողիկէ միութիւնը՝ և կաթողիկէ հաւատքը՝ երբէք եկեղեցւոյ մէջ անձանց վրայ կեցած չէ :

Այնչափ հայրնապետներ, այնչափ Պապեր, ըստ եկեղեցական պատմութեանց, ապօրինաւոր կերպով իշխանութեան հասած ըլլալով վնասուեցան, կամ թէ անարժան ըլլալով մերժուեցան, և բնաւ այն ժողովուրդները կաթողիկէ հաւատքէն և միութենէն բաժնուած չսեպուեցան :

Գեր. Տէր, կրնաք զմեզ Հասունեանի հակառակ անուանել, բայց ոչ ուղղափառութեան հակառակ. Հասունեան հերձուած մը. Հասունեան հերետիկոսութիւն մը՝ դուք հնարած կ'ըլլաք, սակայն ճշմարիտ հերձուած և ճշմարիտ հերետիկոսութիւն չեն կրնար սեպուիլ :

Ի՞նչ վախճանաւ ուրեմն մեղի հաւատոյ ձև մը կ'առաջարկէք ստորագրելու համար :

Սուտ ամբաստանութիւն մըն է, որով զմեզ հերձուած ժողովեան պարտաւոր կ'ուղէք ընել. սակայն և ոչ Գուք կը համարձակիք զմեզ հերետիկոսութեան յանցաւոր, այսինքն հասարակ վնասապարտ ամբաստանել : Ի՞նչպէս ուրեմն հասարակ դաւանութեան ձև մը ստորագրելու առաջարկութիւն մը մէջ տեղ կ'ելլայ :

Այդպիսի առաջարկութիւն մը անոնց միայն կ'ըլլայ, որոնք հաւատոյ վնասապարտ կը ցուցուին : Մենք այդպիսի յանցանքի համար չամբաստանուեցանք, և ոչ այդպիսի յանցանքնիս ցուցուեցաւ. միայն իբր կաթողիկէ միութեան վնասապարտ զրպարտուեցանք. չենք կրնար յանձնառու ըլլալ որ մեր ստորագրութեամբը և խոստովանութեամբը՝ այդպիսի անիրաւ դատապարտութիւննիս զմուենք և հաստատենք :

Հաւատոյ դաւանութիւնը արդէն տուած ենք, երբ քրիստոնեայ՝ և երբ խորանին պաշտօնեայ եղանք :

Ուրբանեան ձևը միշտ ընդունեցանք և յանձնառու եղանք, և բնաւ չմերժեցինք : Թող ցուցուի թէ ո՞ր կէտին՝ կամ ո՞ր յօդուածոյն դէմ պարտաւոր դատուեցանք, և մենք ալ յօժարակամ կրկնենք այն յօդուածոյն դաւանութիւնը՝ որուն դէմ վնասապարտ դատուած ըլլանք :

Տիեզերական ժողովքներուն ամենքն ալ ընդունեցանք և կ'ընդունինք ի հաւատոյս, իսկ ի բարեկարգականս արեւմտեան ժողովքները զմեզ արեւելեացքս ոչ պարտաւորեցին՝ և ոչ կը պարտաւորեն, և ոչ իսկ մենք կ'ուզենք մէկ պարտաւորութիւն մը հնարել որ մեր վրայ գրուած չէ :

Մասնաւորապէս փորքենտեան ժողովոյն՝ Հովովայ գլխաւորութեան վրայ հաւատոյ վճիռը կ'ընդունինք և կը դաւանինք . բայց կը խնդրենք Սեր Տերութենէն որ ակնարկէք և տեսնաք՝ թէ ինչպէս ժողովը կ'ուզէ և կը վճուէ պատրիարքական աթուոց իրաւանց և արտօնութեանց անվճար պահպանութիւնը . (Մ․ Վի․ Վեբ․ Ինչէն Ե․ Բրեյտ․ Են Բրեյնէն Են Բալթիկ․ Եր․ Եր․ Եր․) : Մենք կ'ընդունինք և կը պահպանենք վճուոյն ամբողջութիւնը :

Իսկ վատիկանեան անկատար ժողովոյն վրայ չենք կրնար որոշել թէ որն է անոր բուն ոյժը . որովհետեւ կը տեսնանք և գիտենք թէ այնչափ նշանաւոր հայրապետներ, իմաստուն աստուածաբաններ և քահանաներ, և բարեպաշտ ժողովուրդներ՝ դեռ նոյն ժողովքին վճիռները չընդունելով ալ՝ կաթողիկէ միութեան մէջ կը մնան :

Կը յիշեցնենք միայն որ նոյն ժողովքին վճիռներն ընդունելով ալ՝ ապահով խղճմտանքով կրնանք մեր բարեկարգութեան և իրաւանց պահպանութեանը վրայ հաստատուն կենալ . վասն զի անձնական անսխալութեան առարկայ՝ միայն հաւատք և բարոյք սահմանեալ են . իսկ ընդհանուր և անմիջական իրաւասութեան առարկայ՝ հաւատքէն և բարոյից մէջ զատ, որոշեալ են նաև ընդ ամենայն աշխարհ սիւրուած եկեղեցւոյ վերաբերեալ բարեկարգութիւնը և կառավարութիւնը, այսինքն այն բարեկարգութիւնը և կառավարութիւնը որ կը վերաբերին ընդհանրահան եկեղեցւոյ՝ ըստ որում է՝ ընդհանրական, և ոչ թէ այն բարեկարգութիւնը և կառավարութիւնը որ կը վերաբերին մասնաւոր եկեղեցւոյ, ըստ որում են մասնաւորք :

Վատիկանեան ժողովոյ հաւատոյ սահմանադրութիւնը, փորքենտեան ժողովոյն հաւատոյ վճիռը ետ կ'անջատ չլլալով, վատիկանեան սահմանադրութեան մէջ՝ փորքենտեան վճուոյն հակասական իմաստ՝ չենք կրնար ընդունիլ :



Սակայն չենք կրնար հաւատոյ վարդապետութեան ոյժ և արժէք տալ այնպիսի սահմանադրութեանց և հրահանգացո՞րոնք միանձանց բնակութեան, եպիսկոպոսաց ընտրութեան, եկեղեցեաց՝ և վանորէից դրամական մատակարարութեան, և այլն, կը վերաբերին, զորոնք Ձեր Տերութիւնը կ'ուզէ խօթել այն ձևին մէջ, որուն Գրաստութեան հաստոյ անունը տըված է. անոր համար, Գեր. Տէր. յայտնապէս կ'ըսենք թէ ոչ Քրիստոսն, ոչ Քրիստոսի մարմնովն, ոչ Լէւէն, ոչ Քրիստոսի սուրբն, ոչ Քրիստոսի խօսքովն, ոչ Քրիստոսի խօսքովն, մեր հաւատոյ առարկաներն չեն, (1) և եթէ այն ամենքն ալ որ ասկէց ետև Երկրի հարստացողն յոյն ցեղէն պիտի ըլլան, ոչ զանոնք և ոչ զասոնք բնաւ մեր հաւատոյ հանգանակին մէջ չենք խոթեր :

Իսկ այն հնազանդութիւնը որ պարտաւոր ենք ընծայել եկեղեցւոյ Առաջնորդաց և Գերագոյն Գլխոյն, պիտի ընծա-

---

(1) Այդ կոնգրակներուն հաւատոյ հանգանակին մէջ տեղի չունենալը նոյն իսկ մէջը պարունակուած նիւթերէն յայտնի է : Քրիստոսն, 1842 օգոստոս 20ին տրուած հրահանգ մըն է, որ կրօնաւորաց Պօլիս գալուն երթալուն եւ հոն մնալուն վրայ կը խօսի : Քրիստոսն, 1853 օգոստոս 20ին տրուած հրամանագիր մըն է կրօնաւորաց վանքերուն վրայ : Լէւէն, նոյնպէս 1853 օգոստոս 20ին տրուած սահմանադրութիւն մըն է, որ նախագահութեան թեմին մէջ եպիսկոպոսաց ընտրութեան վրայ, ազգային հին իրաւանց հակառակ՝ կանոններ կը սահմանէ : Քրիստոսն, 1867 Յուլիս 12ին տրուած արդէն ծանօթ առաքելական թուղթն է, որ պատրիարքական եւ ազգային իրաւանց ջնջման հետ մէկտեղ, եպիսկոպոսաց ընտրութեան եւ ազգային ընչից մատակարարութեան վրայ նոր կերպ օրէնքներ կը կարգէ : Նոն Երկր, 1870 փետրվար 24ին Մօնսիներօր Բուլիմին գրուած նամակ մըն է, որով Ս. Պապը զինքը նուիրակ կը կարգէ, եւ ժողովուրդն ալ կը բռնադատէ Գեր. Հասունեանը եւ Գեր. Առաքելեանը ընդունելու : Քրիստոսի խօսքովն, 1870 մայիս 20ին Ս. Պապէն առ Կաթողիկէայ Հայս պատրիարքութեան Կիլիկիոյ գրուած թուղթն է, որով ժողովուրդը Գեր. Հասունեանը չընդունելուն համար, եւ անկախ եկեղեցի հաստատելուն սուտ ենթադրութեան վրայ հիմնեալ, սատանային մատնել եւ եկեղեցիէն դուրս հանել կը սպառնայ :

յինք միշտ՝ ըստ հնաւանդ և կանոնական և կաթողիկէ օրինաց և պայմանաց :

Մեր հաւատոյ դաւանութիւնը՝ նոյն իսկ Ձեր հաւատոյ դաւանութիւնն է . ինչպէս ճշմարիտ ուղղափառ էինք մենք և Գուք՝ ինչուան վերջի տոններս , ասանկ ալ հիմայ մենք նոյն ուղղափառներն ենք . ամենեին մեր հաւատոյն մէջ փոփոխութիւն կամ զեղչումն ըրած չենք և չենք ընէր :

Ըստ այսմ ինչ որ ըսուած կամ գրուած է հաւատոյ գէմ՝ ամենն ալ կը մերժենք՝ առանց իսկ Ձեզմէ ստիպուելու . բայց եթէ ուղուի բարեկարգական և մասնաւոր նիւթերէ՝ կարծեցեալ հաւատոյ յօգուածներ շինուիլ , զմեզ պարտաւոր չենք սեպեր անոնց գէմ եղածներն և գրուածներն ալ հերքելու . ոմանց նախանձայոյզ կարծեցեալ անձանց՝ ստրկաբար ծառայելու համար :

Իրաւունք , արտօնութիւնք , սովորութիւնք , բարեկարգութիւն և կառավարութեան ձև , ասոնք ամենքը , ԳերՏէր , քաղաքական գրութեան հետ անձուկ յարաբերութիւն ունին :

Կաթողիկէոյք ըստ հաւատոյ , Օսմանեան եմք հըպատակութեամբ . ամենեին մեր հաւատքը քաղաքական շահերու համար չենք զոհեր . բայց և ոչ անոյ կրօնական շահերէ՝ մեր տերութեան քաղաքական շահերը զոհելու համար՝ առիթներ չենք ուզեր ստեղծել :

Ինչպէս ինչուան հիմայ ուղղափառ և Հռովմայ ընդունելի մնացինք . մեր հին բարեկարգութեան օրինօք , և վայելելով եկեղեցական իրաւունքները , նոյնպէս կ'ուզենք ըլլալ ասկէց ետքն ալ :

Մեր հաւատոյ անփոփոխութիւնը՝ մեզի գրաւական է նոր քաղաքական դժուարութիւններ չհանելու համար . զմեզ կ'ապահովցընէ մեր տերութեան նոր գրութիւններ չ'առաջարկելու . զմեզ կ'ազատէ իր ազդեցութեանը նոր խոչընդակներ պատճառելէն . մեզի կ'արգելու իր տէրութեանը հպատակ եղող անձանց և ընչից վրայ ունեցած բարձրագոյն իշխանութեանը սահմաններ հնարելու :

Ճշմարիտ ուղղափառք ըստ հաւատոյ , հաւատարիմ Օսմանեանք ըստ հպատակութեան՝ հաստատուն պիտի մնանք :

մեր արեւելեան բարեկարգութեան և իրաւանց վրայ ։

Ի՞նչպէս ուրեմն կը սպառնաք , Գերի՞ Տէր , զմեզ քո  
հերձոսածո՞ղ և այս պարճաբան կախիկէ եկեղեցիէն զարած հրա-  
տարակել ։

Գեր . Տէր , Սրբազան Պապն ալ Մայիս 20ին այդպիսի  
սպառնալիք մը մեզի ըրաւ , բայց ենթադրելով որ մենք  
զմեզ առաջուց եկեղեցիէն բաժնած ըլլանք ։

Գուք ալ արդեօք այդ ենթադրութեան վրայ կը հիմ-  
նէք , թէ Սրբազան Պապէն աւելի մեծ իշխանութիւն մը ու-  
նի՞ք , որով և ոչ այսպիսի ենթադրութիւններու կը կարօտիք ։

Սրբազան Պապը և ոչ ենթադրութեան շատանալով  
ստուգութեան կ'սպասէ , և զանիկայ չունենալով քառա-  
սուն օր սպասեց՝ և քանի մը քառասներակներէ 'ի վեր  
կ'սպասէ ստուգութիւնը գտնելու՝ առանց սպառնալիքնե-  
րը կատարելու ։

Չեր Տերութիւնն ալ այդ ստուգութեան կարօտու-  
թիւն ունի՞ , թէ ինքնաշարժ և ըստ քմաց՝ և որեւիցէ մեր  
կողմանէ ենթադրութենէ կամ ստուգութենէ անկախ  
կերպով կ'ուզէ՞ դործել ։

Եթէ ենթադրութեան՝ կամ լաւ ևս ստուգութեան մը  
կը կարօտի , ահաւասիկ կը յայտնենք , թէ կաթողիկէ՝ Առա-  
քեւական Եկեղեցիէն և իր երկրիս վրայ Գլխէն ոչ բաժնուած  
ենք և ոչ ալ բաժնուիլ կ'ուզենք . ուղղափառ ենք , և ուղղա-  
փառ հաւատքը կը դաւանինք ։

Միայն կ'ուզենք չզրկուիլ այն ազատութեան պտուղ-  
ներէն՝ որ Ս . Եկեղեցին կը շնորհէ յերկնայեան . չենք ուզեր  
մերկանալ այն իրաւունքներէն և արտօնութիւններէն որ  
աւանդութիւնը և ժողովքները կը շնորհեն Սրեւելեան ե-  
կեղեցեաց . չենք ուզեր փոփոխել այն բարեկարգութիւնը  
որ մեր Հայրերէն մեզի աւանդեցաւ ։

Արդեօք այդ բանին համար կաթողիկէ եկեղեցիէն և  
միութենէն և հաւատքէն բաժնուած կ'ըլլանք ։

Մեր խիղճը , Առաքեւական աւանդութիւնները , եկե-  
ղեցական կանոնները , քահանայապետական սահմանադրու-  
թիւնները , պատմութիւնը , և ժամանակակից դէպքերը՝  
մեզի կը հաւաստեն թէ ՈՉ ։

Ցուցրցէք նախ և հաւատեցէք թէ ով որ այսպէս կը գործէ՝ կամովին Եկեղեցիէն և իւր Գլխէն բաժնուած է. և այնպէս ետքը զմեզ քոսն հերձուածող և այն պարտաւորութիւններէն դուրս հրատարակելու ձեռք զարկէք :

Ապա թէ ոչ, Գեր. Տէր, վճիռ մը կրնաք տալ՝ որ վճռոյ մը միայն սրտաքին կերպարանքը կրնայ ունենալ, բայց արդեամբ առաջնորդաց զեղծման և իրենց գործոց ոչնչութեան նոր օրինակ մը կրնայ ըլլալ :

Այս գործը բողոքովին Ձեր կամքէն կախեալ բան մը չէ. առանց մեր կամաւոր բաժանման՝ Դուք ձեզէն բաժնել չէք կրնար :


Դուք կրնաք ըսել թէ հերձուածող էք և յեկեղեցւոյ բաժանեալ. մենք պիտի ըսենք՝ թէ միացեալ ենք և յեկեղեցւոյ անբաժան. ուստի քանի որ Ձեր խօսքը մեր նախընթաց բաժանմանը վրայ չը հիմնուի, կամ թէ մեր հաւատոյ և միութեան վնասապարտ ըլլալն իս օրինաւորապէս չդատուի և չցուցուի, և քանի որ Ձեր վճիռը ըստ աւետարանին և ըստ կանոնական օրինաց չըլլայ, ոչինչ և անպտուղ վճիռ մը կ'ըլլայ, և մենք ալ կը մնանք միշտ ուղղափառք և ՚ի ծոց կաթողիկէ եկեղեցւոյ :

Ձենք կրնար ենթադրել որ Դուք ըստ խղճի գործելով այդպիսի վնասակար և ծայրայեղ որոշողութեան մը հասնիք. բայց եթէ կուրօրէն գործադրութիւն մը զՁեզ ընդդէմ անձին և ընդդէմ համոզման գործելու բռնադատէ :

Իսկ մենք որ ինչ հիմայ կ'ընծայենք Ձեզի, ի պատասխանի Ձեր շրջաբերական ազդարարութեան թղթոյն, կ'ընծայենք նաև բոլոր ուղղախորհուրդ և արդարադատ և աննահաստեան ձանց, բոլոր ընդհանուր ուղղափառ աշխարհի, և բոլոր ապագայ դարերուն :

Այդ մեր յայտարարութիւնը կացցէ մեացէ յաւերժական արձան մեր հաւատոցը՝ մեր ուղղափառութեանը, մեր արդարութեանը, և մեր անմեղութեան : Բոլոր աշխարհ և ամեն դարեր պիտի ձանչնան ու դատեն մեր ուղղութիւնը :

Ահա վկայ կենայ ընդ մեզ և ընդ Ձեզ՝ այն Սրտադէտ Տէրը, որ անաչառ դատաստանաւ պիտի դատէ զհարստահարեալքս և զհարստահարողսն :



Այս մեր իրաւացի յայտարարութեան վրայ ալ թերեւ  
համարձակիք գործադրել սպառնալեաց հարուած մը ,  
քայց յիշել կը խնդրենք՝ որ մահուան գերեզմանէն  
քայլ մը անդին, ծանր պատասխանատուութիւն մը կը  
մնայ տալու այն Ահեղ Գատաւորին առջև՝ ուր նկատ  
մունք, շահ, և որեւիցէ կիրք չեն զօրեր ամենեւին :

Եմք Արհ. և Գեր. Տերութեանդ

Ի Բերայ Կոստանդնուպօլսի Ի 14/26 Հոկտեմբերի 1870

Խոնարհ ծառայք Ի Քրիստոս

ՅՈՎՍԷՓ Վ. ՔԻԻԲԷԼԵԱՆ Աւագերէց

Հ. ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ՍՈՐԿՈՒՃԵԱՆ Մհծ. Մխիթ. Վենետկոյ

Հ. ՊՕՂՈՍ Վ. ՊՕՅՆՈՒԷՅՐԵԱՆ Գաւառ. Մհծ. Անտոն. Ուխտի

Հ. ՂԵՒՈՆԳ Վ. ԶԸՐԱՃԵԱՆ Գործակ. Ազգ. Վարչ.

ԳՐԻԳՈՐ Վ. ԷՆՖԻՅԷՃԵԱՆ

Հ. ՌԱՓԱՅԷԼ Վ. ՄԻՍԱԷՐԵԱՆ Խնամ. Անտոնեան Ուխտի

Հ. ՍԵՐՈՎԲԷ Վ. ՀԱՆԸՄԵԱՆ Վանահայր Անտոն. Ուխտի

Հ. ԱՆՏՈՆ Վ. ԶՕՀՐԱՊԵԱՆ Մհծ. Եկ. Յ. Փրկչին

ՎՐԹԱՆԷՍ Վ. ՃԻԶՄԷՃԵԱՆ Մհծ. Եկ. Ս. Յ. Ոսկեր .

ԵԳՈՒԱՐԳ Վ. ՍԵՒԵԱՆ Մհծ. Եկ. Ս. Գ. Լուս.

ՍԵՐՈՎԲԷ Վ. ԴԱԻԹԵԱՆ Մհծ. Եկ. Փոխմ. Կուս.

ՅԱՐՈՒԹԻՒՆ Վ. ՆՈՒՐԻՃԱՆԵԱՆ

Հ. ՄՈՎՍԷՍ Վ. ԱՄՊԷՐՊՕՅԵԱՆ

Հ. ԵՂԻՇԷ Վ. ԹԷՈՂՈՍԵԱՆ

ԱԹԱՆԱՍ Վ. ՊԱՀՏԻԱՐԵԱՆ

Հ. ԲԱՐՍԵՂ Վ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Հ. ՍՏԵՓԱՆՆՈՍ Վ. ՍԱՐԵԱՆ

ՍԻՄԷՈՆ Վ. ՀԵՔԻՄԵԱՆ


ՊՕՂՈՍ Վ. ԵԱԳՈՒԹԵԱՆ

Հ. ԵՂԻՇԷ Վ. ԱԼԵԱՆԱՔԵԱՆ


ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ՊԱՀՏԻԱՐԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ՃԱՄՊԱԶԵԱՆ Հոգ. Եկ. Ս. Յ. Ոսկերերանի

- Հ. ՅՈՎՀԱՆՆԵՅՍ Վ. ԾԱՂԻԿԵԱՆ Հող. Եկ. Ս. Յ. *Ոսկերերանիք*
- Հ. ԵՒԳԻՆԷՈՍ Վ. ՈՍԿԱՆԵԱՆ
- Հ. ԲԱՌՆԱԲԱՍ Վ. ԵՍԱՅԵԱՆ
- Հ. ՎԱՐԳԱՆ Վ. ՇԻՇՄԱՆԵԱՆ Վերատ. Քաղկեդ. Վարժ.
- ԳՐԻԳՈՐ Վ. ԳԱՐԱԵԱՆ
- ԱՀԱՐՈՆ Վ. ՍՄԲԱՏԵԱՆ
- Հ. ՕՔՍԵՆՏԻՈՍ Վ. ԳՈՒՐԳԷՆԵԱՆ
- ՄԵՍՐՈՎՊ Վ. ՃԵՐՄԱԿԵԱՆ
- ՅՈՎՀԱՆՆԵՅՍ Վ. ՍՏԵՓԱՆԵԱՆ
- Հ. ՍՈՒՔԻԱՍ Վ. ՊԱՐՈՆԵԱՆ
- Հ. ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ Վ. ԻԲԷՔՃԵԱՆ
- Հ. ՄԵՍՐՈՎՊ Վ. ՍԱՐԸԵԱՐԷԱՆ
- Հ. ԳԱԻԻԹ Վ. ՉԸՐԱՃԵԱՆ
- Հ. ՅՈՒՍԻԿ Վ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ
- Հ. ԵՓՐԵՄ Վ. ՆԱՌԷԱՆ
- Հ. ՄԱՂԱՔԻԱ Վ. ՕՐՄԱՆԵԱՆ
- Հ. ՅԱՐՈՒԹԻՒՆ Վ. ԹԵՐՁՈՆՅ
- Հ. ՎԱՀԱՆ Վ. ՄԷՀՏԷՐԵԱՆ
- Հ. ԳԱՐԵԳԻՆ Վ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ
- Հ. ՕՔՍԵՆՏԻՈՍ Վ. ՈՒՄՈՒՏԵԱՆ
- Հ. ՅՈՎԱԾՓ Վ. ՈՒՋՈՒՆԵԱՆ



Հ. ՅԱԿՈՎԼ Վ. ԱՐՃԵԱՆ *'ի Տրապիզոն, եւ Հ. ԳԱԲՐԻԷԼ Վ. ԼԷՔԷՃԵԱՆ 'ի Սամսուն, եւ Հ. ՂՈՒԿԱՍ Վ. ՏԷՐՏԷՐԵԱՆ 'ի Զմիւռնիա գանուելով, չեն կրցած իրենց Քահանայակից Եղբարց հետ մէկտեղ ստորագրել :*





# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

## ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԱԶԳԻՆ

ՈՐ Ի Կ. ՊՕԼԻՍ



Յանուն Ամենասուրբ Երրորդութեան և Մարեմայ Աստուածամօր Անարատ յղացելոյն, և Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, ժողովեալք 'ի միասին, յամին 1870 'ի 25 յունվարի:

Մեք ներքոյգրեալքս, Կաթողիկէ Արևելեան Հայք, կը յայտարարենք այս գրութեամբս առաջի աշխարհի, հանդերձ մ'ընտանեօք և որդւովք, որ հաւատամք զայն ամենայն զորս հաւատայ և ընդունի Կաթողիկէ և Հռովմէական Եկեղեցին. և զՍրբազան Քահանայապետոն Հռովմայ կը ճանաչեմք երևելի գլուխ եկեղեցւոյ, որուն հնազանդ եմք որդիական յարգութեամբ:

Միանգամայն կը յայտարարեմք որ իբրև հարազատ սերունդք Սրբոյ Լուսաւորչին մերոյ, և հաւատարիմ անդամք Արևելեան Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ, անարատ պահել կ'ուզենք մեր եկեղեցական հայրենաւանդ իրաւունքներն, արտօնութիւններն ու սովորութիւններն, ինչպէս որ վայելած ենք զանոնք մեր նախնեաց ժամանակէն 'ի վեր:

Նմանապէս որովհետև Գ. Հասունը, որուն գրեթէ երեսուն ամաց 'ի վեր հետևած ընթացքը ամենևին հակառակ է ազգային եկեղեցական իրաւանց և կանոնադրութեանց, և ամենևին օտար Աւետարանական հեղութենէ, իրեն հովուական խնամոց յանձնուած ժողովուրդը ստութեամբ զրպարտելով բազմապատիկ ֆնասուց և գայթակղութեանց պատճառեղաւ և զազգը երկու սլառակտելու, անոր համար՝ բողբոլին գայթակղեալ իր վրայ յայտ առնեմք այսօր ամենայն վաւերական կերպով (ինչպէս նաև 1869 դեկտ. 2/14 ին առ Սրբազան Պապն ուղղեալ աղերսագրովն իս բողբոլեր ենք) որ բացէ 'ի բաց կը հրաժարիմք իրեն եկեղեցական տեսչութենէն:

Նմանապէս կը բաժնուինք իբրև յետին միջոց այս երեսնամեայ խռովութեանց վերջ մը տալու, այն անձանցմէ, որոնք այս էական խնդրոյս մէջ մեզի հակառակորդ և Գեր. Հասունի գործակից գտնուեցան, միանգամայն մեր յատուկ եկեղեցիները և ազգային անշարժ ստացուածքներն ու եկամուտները մեզի գրաւելով:

Միով բանիւ պիտի մնանք ուղղափառք հաւատով, անբաժանելի 'ի Հռովմէական Եկեղեցւոյ, ինչպէս որ էին մեր բարեյիշատակ հայրերը մինչև ցմահ Գրիգոր Պետրոս Բ. Կիլիկիոյ Պատրիարքին, որ վախճանեցաւ յ 8 յունվարի 1866, անփոփոխ պահելով Հայ Սրբեւեան Եկեղեցւոյ արարողութիւնները և բարեկարգական կանոնները, և ամենայնիւ հաւատարիմ հպատակ մնալով վեհափառ Թագաւորին մերոյ քաջայաղթ Սուլթան Ապտիւլ Ազիզի:

՚ի հաստատութիւն ստորագրեմք:



# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՔԱՀԱՆԱՅԻՑ

## ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԱԶԳԻՆ

ՈՐ Ի Կ ԳՈՂԻՄ

ՏՈՒԵԱԼ ԱՌ ՄՕՆՍԻՆԵՕՐ ԲԼԻՒՄ



### Գերապայծառ Տէր.

Մեք ներքոյգրեալ քահանայքս կաթողիկէ Հայոց կոստանդնուպօլսոյ՝ յետ զամենայն փորձ եւ հնարք ի գործ դնելոյ եւ կշռադատելոյ ամէն բան.

Նկատելով՝ որ մեր պարտքն է իբր քահանայ եւ խնամակալ հոգւոց՝ անհոգութիւն չընել հոգւոց փրկութեան եւ խափանել զզեղծմունս:

Նկատելով՝ որ պատասխանատու ենք Ատուածային արդար դատաւորին առջեւ՝ Անարատ Գառիսն Ատուծոյ արեամբ փրկեալ հոգւոց համար առ հառարակ եւ առանձնաբար:

Նկատելով՝ որ ամենայն միջոց եւ ճանապարհ անօգուտ եղան եւ պիտի ըլլան առ ի համոզել այս ժողովուրդը եւ հաշտեցընել ընդ իշխանութեան Գեր. Հասունին:

Նկատելով՝ որ այս հիմնեալ է ի վերայ զգաժմանց սրտից որք ճշմարտապէս եւ իրօք գայթակղեալ են հովուին անձին եւ գործոցը վրայ:

Նկատելով միանգամայն եւ վկայելով՝ որ ասոնց հաւատքը եւ դաւանութիւնը ճշմարիտ է եւ ուղիղ եւ համաձայն կաթողիկէ հաւատոյ:

Նկատելով ինչպէս կը յայտարարեն իրենք՝ թէ են եւ պիտի մնան ի միութեան եւ ի հաղորդութեան ընդ մի՛ սուրբ՝ կաթողիկէ եւ Առաքելական Եկեղեցւոյն Հռովմայ:

Նկատելով՝ որ ներկայ գիպուածոց մէջ ընդ առաջ ելած գժուարութիւններուն եւ պարագաներուն վրայ կը ճշմարտին

այն կանոնական հանգամանքները, որք արդարացնեն եւ իրաւունք կու տան ժողովրդեան բողոքին ընդդէմ անձին իւրոյ հովուին ։

Վերջապէս մեք քահանայքս համարելով զմեզ իբր առանձին անձինք անկախ յայլ եւ այլ ընկերութեանց՝ որոնց կը վերաբերինք, եւ միայն իբր քահանայ եւ խնամակալ հոգւոց այս ժողովրդեան ։

Յայտ առնեմք Արհ. Գեր. Տերութեանդ որ չենք կարող ի խղճէ մտաց թողուլ այս ժողովուրդը ի կամս անձանց, եւ առանց հոգեւոր նպաստից՝ որոց ունին պէտս եւ իրաւունս, եւ խնդրեմք խոնարհաբար ի բարեսրտութենէ Արհ. Գեր. Տեառնդ բարեհաճել փոփոխելու ձեր հիմնական պահանջմունքները ի մասին հաշտութեան, ժանուցանելով որ եթէ հաստատ եւ անփոփոխ մնայ Ձեր Տերութեան յանձնուած հրամանագիրը, ճշմարտելով անատեն հաւատացելոց վերջին կարօտութիւնը՝ հարկ պիտի ըլլայ ներքոյդրելոցս ի դորժ դնել եւ վարել այն իշխանութեամբ զոր շնորհէ բարեգութ Մայր մեր Սուրբ Եկեղեցի իւր ամեն պաշտօնէից անխտրաբար, վասն նպաստելոյ հաւատացեալ որդւոց իւրոց՝ վերջին եւ բռնադատիչ պիտոյից մէջ ։

Ի կոստանդնուպօլիս, 12 Մարտ (փետրւար 28) 1870 ։

(Ստորագրութիւնս Գահանայից ։)



# ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ



ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ

Կ. Պօլիս 6/18 Հոկտ. 1870.

ՅԱՐԳՈՑ ՏԵՐ

Ահա վերջապէս հասեալ կամք ի հանդիսաւոր կէտն, յորում թէ Յարգութիւն Ձեր եւ թէ այլ Քահանայք յաշխարհիկ եւ ի կրօնաւորական կարգէ ընդխառնեալք ի քաջածանօթ ցաւալի յուզմունս, պարտին կերպապէս յայտ առնել եթէ կամիցին մնալ միացեալ ի կեդրոն կաթողիկէ Հաւատոյ, այսինքն ի Սուրբ Գահն Հռովմէական եւ ի ծայրագոյն Քահանայապետն որ ունի զայն, իբրու ներկայացուցիչ Բիսուսի Քրիստոսի ի վերայ երկրի, կամ թէ կամիցին ի կատար ածել զբաժանումն զայն բոլորական, որոյ արդէն սկիզբն եղև ի ձեռն նախընթաց պատահարաց:

Սրբազան Քահանայապետն Պիոս Թ. հայրական խնամովք իւրովք չառնելոյ զանց զորով եւ իցէ միջոցաւ, որով մարթ իցէ պահել զեղբարս եւ զորդիս իւր ՚ի խորհրդաւոր Տապանի, արտաքոյ որոյ չիք փրկութիւն, յանձն արար ինձ առաջարկել Ձեզ գոյտարարութիւն կամ զձև Դաւանութեան Հաւատոյ զոր փակեմք աստանօր, որպէս զի ի բացորոշեալ սահմանի որոշուող ի թուականէ Ազգարարութեան ներկայիս, Յարգութիւն Ձեր հաւանեսցի ընդ այն եւ ստորագրեսցէ: Եթէ ի լրանալ յիշեալ պայմանաժամու ոչ լցցի թէութիւնն յիշատակեալ, պարտաւորեցայց զաւօք սրտիս յառաջանալ ի միւս մասն Առաքելական հրամանին՝ հրատարակելով զՅարգութիւն Ձեր եւ զայլ նշանակեալն ի վեր անդր Իսկոպէս (Իսկոպէս) հերձուածողս եւ զան որոյ Բաժանեալս ի կաթողիկէ Եկեղեցոյ:

Սպասեալ մնալով պատասխանուոյ Ձերում, դամ ի յայտ առնել զիս Յարգութեան Ձերոյ

Ամենախոնարհ ծառայ ի Քրիստոս

Տեղէ Կնոյ.

ԱՆՏՈՆ ՅՈՎԻՄԷՓ ԲԼԻՒԻՍ

ԱՌՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԹԻԱՆՈՒ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆՈՒԻՐԱԿ Ի Կ. ՊՈԼԻՍ

## ԴԱԻԱՆՈՒԹԻՒՆ ՀԱԻԱՏՈՅ

Ես ստորագրեայս ոչ կամելով բաժանիլ ի հաւատոց եւ ի վարդապետութենէ ճշմարիտ եւ միակ կաթողիկէ Եկեղեցւոյ, խոստովանիմ հաստատուն հաւատով եւ դաւանիմ զայն ամենայն եւ զմի մի ի նոցանէ որք բովանդակին ի ձեւն հաւատոյ զոր բարեյիշատակ Ուրբանոս Ը. սահմանեաց վասն Արեւելեայց ։

Եւ մանաւանդ զայնս՝ որք սահմանեցան ի Սրբոց Տիեզերական ժողովոցն Փլորենտիոյ եւ վատիկանու զգլխաւորութենէ Բահանայապետին Հռովմայ. այսինքն թէ նմին ինքեան Բահանայապետին Հռովմայ յանձն երանելոյն Պետրոսի աւանդեալ է ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Բրիստոսէ լիակատար եւ գերազոյն իշխանութիւն իրաւաբանութեան հովուելոյ, ուղղելոյ եւ կառավարելոյ զընդհանուր Եկեղեցին, առ որ պարսուանդին որոյ և իցէ ծիսի եւ արժանապատուութեան հովիւք եւ հաւատացեալք թէ իւրաքանչիւր առանձինն եւ թէ ամենքեան միանգամայն պաշտամամբ նուիրապետական ստորակարգութեան եւ ճշմարիտ հնազանդութեան, ոչ միայն յիրս որք վերաբերին հաւատոց եւ բարուց, այլ նաեւ յայնոսիկ որք պատկանին բարեկարգութեան եւ կառավարութեան Եկեղեցւոյ ընդհամայն երկիր տարածելոյ ։

Վասն որոյ ընդունիմ եւ մեծարանօք յարգեմ զամենայն զՍահմանադրութիւնս, զԱռաքելական թուղթս, զՎճիռս և զՀրահանգս որք ի Բահանայապետից Հռովմայ, եւ մանաւանդ ի Սրբազան Տեառնէ մերմէ Պիոսէ նախախնամութեամբ Աստուծոյ Թ. Պապէն, կամ հրամանաւ նոցին տուեալ են առ Արեւելեայս եւ յանուանէ առ Հայս, եւ զայլս ամենայն որք տացին ի նմին Սրբազան Տեառնէ մերմէ կամ ի Յաջորդաց նորին. եւ ի մանաւորի ընդունիմ եւ մեծարանօք յարգեմ զՀրահանգս եւ զՎճիռս 20 աւուր Օգոստոսի 1842, որոց սկիզբն է «Բողոք», 20 աւուր Օգոստոսի 1853 «Բողոք», «Թեպէտ», զարձեալ զՍահմանադրութիւնն տուեալ յ 12 աւուր Յուլիսի 1867, որոյ սկիզբն է «Ի դատան», եւ զԱռաքելական թուղթն «Ուսանց Բողոք», որ տուաւ ի 24 աւուր Փետրուարի այսր ամի առ Արհ. Գեր. Անտոն Բիլիւիմ Առաքելական Նուիրակն Կ. Պօլսոյ եւ զմիւսս այլ «Ուսանց Բողոք», գրեալ ի 24 աւուր Մայիսի այսր ամի առ Ուղղափառ Հայս Պատրիարքութեան Կիլիկիոյ ։

Իսկ որ գործեցան կամ ասացան կամ գրեցան թէ յինէն եւ թէ յայլոց ընդդէմ վերոյիշելոց, ըստ ամենայնի դատապարտեմ եւ մերժեմ ։

### ԱՌ Յ. ՏՆԱՐԾ

Գեր . Տ. Իգնատիոս Վ. Ղալպճեան .  
Գեր . Տ. Յակոբ Վ. Պաշտօնարեան .

Գեր . Տ. Բարսեղ Վ. Գասպարեան .  
Գեր . Տ. Սուքիաս Վ. Գաղանձեան .

### ՅԱՆՏՈՆԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵՆԷ՛ .

Վ. Հ. Պօղոս Պոյնուէրիեան .  
Վ. Հ. Ստեփաննոս Սարեան .  
Վ. Հ. Ռափայէլ Միստրեան .  
Վ. Հ. Եղեշէ Թէոդոսեան .  
Վ. Հ. Յովհաննէս Կաղիկեան .  
Վ. Հ. Ղևոնդ Չրրաճեան .  
Վ. Հ. Մեսրոպ Սարրեարեան .  
Վ. Հ. Անտոն Զօհրապեան .

Վ. Հ. Սերոբէ Հանրմեան .  
Վ. Հ. Եփրեմ Նարեան .  
Վ. Հ. Յուսիկ Պաղտատրեան .  
Վ. Հ. Յովսէփ Ուզունեան .  
Վ. Հ. Գաբրիէլ Լէքէճեան .  
Վ. Հ. Մաղաքիա Օրմանեան .  
Վ. Հ. Դաւիթ Չրրաճեան .  
Վ. Հ. Բարթողիմէոս Իբէքճեան .

### Ի ՄԻԱԲԱՆՈՒԹԵՆԷ՛ ՄԻԹԱՐԵԱՆՅ ՎԵՆԵՏԿՈՅ .

Վ. Հ. Մովսէս Ամպէրպոյեան .  
Վ. Հ. Յովհաննէս Սրկուճեան .  
Վ. Հ. Բարսեղ Մարտիրոսեան .  
Վ. Հ. Վարդան Շիշմանեան .  
Վ. Հ. Եւգինէոս Յակնեան .  
Վ. Հ. Եղեշէ Ալեանաբեան .

Վ. Հ. Բառնարաս Իսայեան .  
Վ. Հ. Յակոբ Արճեան .  
Վ. Հ. Սուքիաս Պարոնեան .  
Վ. Հ. Յարութիւն Թէրզանց .  
Վ. Հ. Օքսեհարիոս Գուրգէնեան .

### ՅԱՇԱԿԵՐՏԱՅ ԺՈՂՈՎՈՅ ՏԱՐԱԾՄԱՆ ՀԱԻԱՏՈՅ

Յ. Տ. Յարութիւն Նուրիճանեան .

Յ. Տ. Յովհաննէս Ստեփանեան .

### ՅԱՇԽԱՐՀԻԿ ԿՂԵՐԷ՛Ն .

Յ. Տ. Յովսէփ Քիւբէլեան .  
Յ. Տ. Յովհաննէս Ճամպագեան .  
Յ. Տ. Ահարոն Սմբատեան .  
Յ. Տ. Մեսրոպ Ճերմակեան .

Յ. Տ. Սիմէոն Հէքիմեան .  
Յ. Տ. Եղուարդ Սեւեան .  
Յ. Տ. Յովհաննէս Պաշտօնարեան .  
Յ. Տ. Գրիգոր Քարաեան .

### Ի ՋՄՄԱՌԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵՆԷ՛ .

Յ. Տ. Աթանաս Պաշտօնարեան .  
Յ. Տ. Սերոբէ Դաւիթեան .  
Յ. Տ. Վրթանէս Ճիզլէճեան .

Յ. Տ. Գրիգոր Լէճիէճեան .  
Յ. Տ. Պօղոս Եագութեան .

Առաջիկայ ազդարարութիւնս եղեալ է յԱռաքելական Նուիրակութենէս առ Եպիսկոպոսոսունս եւ առ այլ ամենայն ըմբոստս թէ յԱշխարհիկ եւ թէ ի կրօնաւորական կարգէ : յԻշատակեալս ի նախընթաց ցուցակի առանձին թղթովք որ ուղղեալ են առ իւրաքանչիւր ի նոցանէ : Առ ի զառաջս առնուլ

որ եւ իցէ շփոթից հասանելոյ նամակաց ի ձեռս, կամ այլոյ պատճառի ազդ լինի դարձեալ նոցին իսկ առաջիկայ հրատարակութիւնս, որում յաւելեալ է եւ Հայկական թարգմանութիւնն :

Առաջիկայիւս ազդ լեալ համարին, նաեւ այլ ամենայն Հայածէս եկեղեցականք յԱշխարհիկ եւ ի նրօնաւորական կարգէ բնակեալք յայսմ Պատրիարքական թեմի, որք թէպէտեւ չիցեն բովանդակեալ ի նախընթաց ցուցակի, այլ պատկանին առնոյն դաս ըմբոստացելոց :









